Լոռու մարզ

Պատմամշակութային կոթողներ և հուշարձաններ

ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններից շուրջ 3054-ը տեղակայված են Լոռու մարզում: Մարզի տարածքում են գտնվում համաշխարհային մշակութային ժառանգության օբյեկտների ցանկում (ՅՈՒՆԵՍԿՕ) ընդգրկված երկու հուշարձան՝ Հաղպատի ու Սանահինի հրաշակերտ վանական համալիրները: Լոռու մարզի պատմաճարտարապետական հուշարձանները իրենց քանակով, բազմազանությամբ ու արժեքայնությամբ առանձնահատուկ տեղ են գրավում Հայաստանի մյուս մարզերի նմանատիպ կոթողների շարքում: Դրանք գալով դարերի խորքից՝ սերունդներին են ներկայացնում մեր ժողովրդի բազմադարյան նյութական մշակույթի ակնառու նվաճումները: Մարզի պատմամշակութային կոթողների շարքում կան պատմական բնակատեղիներ, ամրոցներ, վանական համալիրներ, եկեղեցիներ, կամուրջներ, աղբյուրներ, մահարձան-կոթողներ, խաչքարներ ու աշխարհիկ կամ կենցաղային շինություններ: 12-13-րդ դդ. Լոռու ճարտարապետության ամենաբուռն ծաղկման շրջանն է համարվում:

Ախթալայի վանական համալիր

Ախթալայի բերդ-ամրոցը գտնվում է Դեբեդ գետի ափին: Այն կառուցվել է Բագրատունիների Կյուրիղյան ճյուղի ներկայացուցիչների կողմից X դարում, իսկ եկեղեցին՝ XIII դարում: Ախթալայի տարածքում են գտնվում Առաքելոց և Սուրբ Աստվածածին եկեղեցիները: Սուրբ Աստվածածին եկեղեցու պատերին պահպանվել են XIII դարով թվագրվող հրաշալի որմնանկարները: Ախթալայի վանքի ուխտագնացություն օրերն են սեպտեմբերի 20-21-ը:

Հաղպատի վանական համալիր

Հայոց Աբաս Բագրատունի թագավորի օրոք հիմնադրված Հաղպատի համակառույցը գտնվում է Հայաստանի Լոռու մարզի Հաղպատ գյուղի հարավարևելյան բարձրադիր մասում: XI դարից սկսած այստեղ կառուցվում են սբ. Գրիգոր և սբ. Աստվածածին եկեղեցիները, մեծ ժամատունը, կամարասրահը, գրատունը և սեղանատունը: Հանդիսանում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության օբյեկտ:

Սանահինի վանական համալիր

Սանահինի վանական համալիրի /X-XIII-րդ դդ./ առաջին՝ Սուրբ Աստվածածին եկեղեցին հիմնել է Հայոց թագավոր Աշոտ Գ Ողորմածը 966թ.-ին: X-XIդդ. եղել է մշակութային կենտրոն, ունեցել է բարձրագույն դպրոց, գրատուն, հարուստ գրադարան: Սանահինի վանքը գտնվում է Ալավերդի քաղաքում: 10-րդ դարի առաջին կեսից սկսած սբ. Աստվածածին եկեղեցու շուրջն սկսել են կառուցել սբ. Ամենափրկիչ գլխավոր տաճարը, Մագիստրոսի ճեմարանը, սբ. Գրիգոր բոլորակ եկեղեցին, գրատունը, Մեծ գավիթը, զանգակատունը:

Օձունի վանք

Օձուն գյուղում է գտնվում Օձունի սբ.Աստվածածին եկեղեցին՝ կառուցված VI-VIIդդ. դարերում Հովհան Օձնեցի կաթողիկոսի կողմից: Գմբեթավոր բազիլիկ եկեղեցին ունի արտաքին կամարաշար սրահ:
Գյուղի կենտրոնական մասում գտնվում են Օձունի գմբեթավոր բազիլիկ եկեղեցին, կոթող-մահարձանը, միջնադարյան 2 գերեզմանոց (մեծաթիվ խաչքարերով և մահարձաններով), արևելյան եզրին՝ Ծիրանավոր-Ծաղկավանք եկեղեցին, 1,5կմ հարավ-արևելք՝ Հոռոմայրի վանքը:

Հոռոմայրի վանք

Հոռոմայր վանական համալիրը միջնադարյան Հայաստանի նշանավոր կրոնական կենտրոններից է (հիշատակվում է VII դարից): Գտնվում է Լոռու մարզի Օձուն գյուղից հարավ-արևելք: Հիմնադրվել է VII դ., գլխավոր եկեղեցին՝ 1187 թ.: Համալիրը կազմված է շինությունների երկու խմբից՝ տեղակայված Դեբեդ գետի ձախ ձորալանջին և սարահարթի վրա:

Քոբայրի վանք

Քոբայրի վանքային համալիրը (XII-XIIIդդ.) գտնվում է Լոռու մարզում՝ Դեբետի ձորալանջի բարձրադիր դարավանդների վրա: Մենաստանը հիմնադրվել է Բագրատունյաց տան Կյուրիկյան ճյուղի Կյուրիկե Բ թագավորի դուստր Մարիամի կողմից 1171 թվականին: Համալիրը բաղկացած է երեք եկեղեցուց, զանգակատուն-տապանատնից, սեղանատնից, մատուռներից, խաչքարերից, պարսպապատերի մնացորդներից: Տարածքը եզերող ժայռերում կան դժվարամատչելի այրեր և պատսպարաններ:

Կայան Բերդ

Կայանբերդ կամ Ակնաբերդ ամրոցը գտնվում է Լոռու մարզի Հաղպատ և Սանահին գյուղերի միջև, երկու կիրճերի միացման տեղում, հրվանդանի վրա: Ըստ շինարարական արձանագրության կառուցել է Հաղպատի վանքի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսը 1233թ.-ին: Սկզբնապես կոչվել է Ամրոց Հաղպատա Սուրբ Նշանի: Կայանբերդում է գտնվում նշանավոր Դսեվանքի Սուրբ Աստվածին եկեղեցին:

Լոռի Բերդ

Լոռի կամ Լոռե բերդը գտնվում է Ստեփանավանից մոտ 5 կմ հյուսիս-արևելք՝ Ձորագետի ձախ ափին: Հիմնադրել է Դավիթ Անհողինը՝ հավանաբար 1005 - 1020թթ.: Քաղաքի առաջին պարսպի մեջ պարփակված տարածությունը (մոտ 9 հա) միջնաբերդի դեր է կատարել: Լոռի բերդը ընդգրկում է 35 հա տարածություն: Ընդգրկված է Լոռի Բերդի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում:

Բարձրաքաշ Սբ. Գրիգոր վանք



Բարձրաքաշ Սբ. Գրիգոր վանքը գտնվում է Լոռու մարզի Դսեղ գյուղից 2կմ հյուսիս-արևելք՝ Սաղուձոր (Մարց) գետի անտառապատ ձորալանջին: Համալիրը կազմում են երկու եկեղեցիները, գավիթը, մատուռը և Մամիկոնյանների տոհմական գերեզմանոցը: Կառույցներն ունեն քանդակներ և արձանագրություններ: Սպիտակ երանգի համար անվանվել է նաև Ճերմակ վանք: Շրջակայքում կան աղբյուր, ձիթհանքի մնացորդներ, խաչքարեր և Սմբատ Մամիկոնյանի որդի Համլիկի ու նրա կնոջ՝ Մամքանի կառուցած Սաղուձորի վանքապատկան կամուրջը:

Խորակերտի վանք

Խորակերտի վանքը գտնվում է Լոռու մարզի Ջիլիզա գյուղի մոտ՝ Լալվար լեռան արևմտյան փեշերին: Երբեմնի պարսպապատ համալիրից պահպանվել են միջնադարյան եկեղեցին, կիսավեր գավիթը, մատուռների, սեղանատան ավերակները, քանդակազարդ գերեզմանաքարերը: Եկեղեցու ճակատները պարզ են, գրեթե զուրկ հարդարանքից: Խաչաձևվող կամարները կազմում են ոչ միայն կառուցվածքային, այլև ողջ ճարտարապետական հորինվածքի հիմքը:

Զգրաշեն եկեղեցի

Լոռու մարզի Վարդաբլուր գյուղից հյուսիս՝ Զորագետի վտակի ափին գտնվում է Զգրաշեն միանավ թաղածածկ եկեղեցին:
Եկեղեցու սրբատաշ բազալտից կառուցված պատերը բարձրանում են երկաստիճան որմնախարսխի վրա: Ծածկը չի պահպանվել: Եկեղեցին ունի երեք մուտք՝ երկայնական պատերում և արևմուտքում:

Հնեվանք

Հնեվանք վանական համալիրը գտնվում է Լոռու մարզի Կուրթան գյուղից արևելք՝ Զորագետի աջ ափին: Խաչաձև գմբեթավոր եկեղեցին կառուցվել է VIIդարում, սրբատաշ ֆելզիտից, արտաքուստ ուղղանկյուն է, ներքուստ՝ եռաբսիդ, ուղղանկյուն՝ արևմտյան թևով, անկյուններում՝ ավանդատներով:

Ձորաեզրի վանք

Ձորաեզրի վանքը գտնվում է Լոռու մարզի Օձուն գյուղում: Այն ընդգրկված է Հայաստանի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում: Համաձայն վիմագրական աղբյուրների՝ շինությունների վերին հուշարձանախումբը կառուցվել է Հոռոմայրի միաբանների նախաձեռնությամբ և, թեև կանգնած է մասնակիորեն մեկուսի, համարվել է Հոռոմայրի վանքի բաղկացուցիչ մասը:

Քառասնից Մանկանց վանք

Քառասնից Մանկանց վանքը XIII դարի հայկական վանքային համալիր է: Գտնվում է Լոռու մարզի Դսեղ գյուղի հյուսիս-արեւմտյան մասում՝ Դեբետի կիրճի աջակողմյան զառիթափ լանջի «Տախտեր» կոչվող վայրում: Բաղկացած է եղել եկեղեցուց, ժամատնից, կացարաններից, օժանդակ շինություններից, որոնցից պահպանվել են չնչին մնացորդներ:

Ամրակիցի Սուրբ Նիկողայոս հրաշագործ եկեղեցի

Ամրակիցի Սուրբ Նիկոլայ Հրաշագործ ռուս-ուղղափառ եկեղեցին գտնվում է ՀՀ Լոռու մարզի Ամրակից գյուղում: Կառուցվել է 1848 թվականին՝ ուկրաինացի կազակների կողմից հիմնված Նիկոլաևկա (այժմ՝ Ամրակից) գյուղի ռուս-ուղղափառների համար: 1910-1914 թվականներին վերակառուցվել է՝ ստանալով այժմյան տեսքը:

Տորմակավանք

Տորմակ եկեղեցին գտնվում է Գյուլագարակ գյուղից մոտ երկու կմ հարավ, Տորմակադուռ (Որմակադուռ) ավերակ գյուղատեղիում: Վաղ միջնադարյան Հայաստանում տարածված՝ արտաքին սրահով միանավ եկեղեցիներից է: Ընդգրկված է Գյուլագարակի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում:

Դորբանդավանք

Դորբանդավանքի Սուրբ Աստվածածին եկեղեցին գտնվում է Լոռու մարզում՝ Սվերդլով գյուղից 3 կմ դեպի հյուսիս-արևելք: Կառուցվել է V-VII դարերում, վերականգնվել է 1980-ական թվականներին: Այն դասվում է վաղմիջնադարյան եկեղեցիների շարքին: Շինությունը, իր չափերով փոքր լինելով հանդերձ, համարվում է Լոռվա ճարտարապետության ինքնատիպ ու արժեքավոր ստեղծագործություններից մեկը:

Բգավոր եկեղեցի

Բգավոր եկեղեցին գտնվում է Հայաստանի Լոռու մարզի Աքորի գյուղից 3 կմ հյուսիս-արևմուտք՝ Դեբեդ գետի ձախափնյա բարձրադիր սարահարթի վրա, Լալվար լեռան թեքադիր լանջին: Հուշարձանը չունի վիմական արձանագրություններ կառուցման ժամանակաշրջանի մասին, բայց հորինվածքով նման է Ախթալայի և Քոբայրի եկեղեցիներին: Հարավարևմտյան կողմի ցածր մասում փռված է հին գյուղատեղը մեծ թվով կացարանների մնացորդներով՝ «բագերով», որից և եկեղեցին ստացել է Բգավոր («բագեր» ունեցող) անվանումը:

Սուրբ Հովհաննես վանք. Արդվի

Արդվու Սուրբ Հովհաննես վանքը (կառուցվել է VIII-XVII դարերում), որը հայտնի է նաև Սուրբ Հովհաննես կամ Հովհան Օձնեցու վանք անուններով, գտնվում է Հայաստանի Լոռու մարզում՝ Արդվի գյուղի հյուսիսարևմտյան եզրին: Վանքային համալիրը բաղկացած է երկու եկեղեցուց և զանգակատնից: Քչերին է հայտնի, որ Արդվին նախաքրիստոնեական գյուղ է, համայնքում առկա են նախաքրիստոնեական մի քանի գերեզմանատեղիներ:

Ծիրանավոր Ծաղկավանք

Ծիրանավոր-Ծաղկավանք եկեղեցին եկեղեցին (կառուցված V-րդ դարում) գտնվում է Օձուն գյուղի արևելյան մասում՝ Դեբեդի կիրճի վրա կախված ժայռերից մեկի գլխին: Եկեղեցին ունի ժամանակին բնորոշ ճարտարապետական զուսպ հորինվածք: Ըստ ավանդության՝ եկեղեցին Ծաղկավանք անունն ստացել է մանկական ծաղիկ հիվանդությունը բուժելու զորության համար: Կառույցի երկրորդ՝ Ծիրանավոր անունն էլ կապված է ծիրանազգեստ Մարիամի պաշտամունքի հետ: